(Եւ ապա առեալ զ Արբութին դառնայ առ ժողովուրդն . սկսաննելով, )

### Հարական բի:

**Պ**արգեատուն ամենեցուն՝ այսօր խնդրի պարգես 'ի պիղատոսէ. և արկօղն զլոյս որպէս զօթոց՝ հաւանի պատիլ 'ի յովսեփայ:

Կենդանատուն ամենեցուն՝ այսօր դնի 'ի նոր գերեզմանի . և դանձն անմահութեան կնքի մատանեաւ քահանայիցն :

Արարածոց փրկութիւն Քն՝ այսօր եղաւ 'ի նորափոր վլուի. զոր օրհնեն զօրք երկնից երգով պահպանի 'ի զինուորաց :

Կենդանին յաւիտենից Քն՝ այսօր խնդրի որպէս մեռեալ 'ի պիղատոսէ. և մերկուն ծածկոյթն ադամայ՝ յանձն առնու պատիլ 'ի յովսեփայ :

Անմահութեց տուող Քն՝ այսօր 'ի հող մահու խոնարհեցաւ. և բնակեալն 'ի լոյս անմատոյց՝ թաղեցաւ մարմնով 'իսիրտ երկրի :

Արեդակն արդարութեա՞ քս՝ այսօր եղաւ  
՚ի գըի ստուերականի . և փառացն հօր ձա-  
ռագայթ՝ ծածկեցաւ վիմով , ի մէջ երկրի :

Կուսածին մարմնով քս՝ այսօր դնի ՚ի  
կոյս գերեզմանի . և լուծիչն երկանց դժո-  
խոց՝ մատանեաւ կնքի քահանայիցն :

Արթուն բնութք արարին ամենեցուն՝  
այսօր ննջէ ՚ի մէջ մահացելոց . որ պահէն  
վիրայէլ անքուն՝ պահպանի ՚ի զինուորաց :

Ցնծութիւ արարածոց քս՝ այսօր արտա-  
ռուի որպէս մեռեալ ՚ի տրտմազգեցից . և  
բուրումն անմահութեա՞ խնկի ՚ի զգաստիցն  
իւղաբերից :

( Եւ ՚ի հասանելն թափօրին ՚ի տեղի  
թաղմանն , )

### Հարական դէ . սուշը :

Յովէփ քեղ հաւատացեալ , պիղատոք  
աղերսէր , շնորհել զտէրունեան մարմին :

Զանապական զածացեալ մարմինն պա-  
տեալ նը կտաւօք , և եղ ՚ի գերեզմանի :

Որ արարիչդ ես արարածոց հանգուցեալդ  
՚ի գերովքէս , վիմով կնքեցար յերկրի :

( Եւ ապա Քհ . դնէ անդ ՚ի թաղմանն  
զսրբութին , և խնկարկէ . և այլք երգեն , )

Էյ . Երանեմք զշարչարանս քո բանդ , և  
փառաւորեմք զհանգչելըդ քո ՚ի գերեզմանի:  
Որ վասն մեր համբերեցեր ած :

Արթանապէս պատկառելի է հըեշտակաց  
խմբից տարածանիլդ քո ած ՚ի վերայ խա-  
չին : Ան :

( Եւ զկնի Քհ . առնու դլաշափայտն ՚ի  
ձեռս . երգելով ասէ , )

Խաչի քո Քրիստոս Երկիրպագանեմք :  
 ( Երիցս կրկնէ . բայց նախ ցած ձայնիւ ,  
 և յետինն բարձր : Որ նոյն կերպիւ Երդի և  
 պատասխանն , ցը , )

Եւ զշարչարանս քո մեծացուցանեմք , և  
 զթաղումն քո փառաւորեմք :

Եկայք հաւատացեալք Երկրպագեսցուք  
 քնի այ մերում . վասն զի եկն և 'ի ձեռն խա-  
 չին իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի :

( Եւ Քհ : Խաչակնքէ զժողովուրդն խա-  
 չափայտիւն . և ապա դնէ 'ի գրքակալի .  
 Խնկարկէ , և համբուրէ . համբուրեն և այլք  
 կարգաւ . և 'ի համբուրելն ժողովրդեան՝  
 Երդեն ևս , )

Փառք նը խաչիդ և օրհնութիւն . փառք  
 նը թաղմանդ և օրհնութի : Աշանեցաւ առ  
 մեզ լոյս Երեսաց քոց , և ետուր ուրախու-  
 թիւն սրտից մերոց : 'Ի պտղոյ ցորենոյ գին-  
 ւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնա : Փառք  
 նը խաչիդ , ևն : Փառք և Երկրպագութիւն  
 Հօր և Որդւոյ և սըյ Հոգւոյն : Այժմ և  
 միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամեն :  
 Փառք նը խաչիդ ևն :

Քրէ : Խնդրեսցուք : Աշ . Քում ամենա-  
 զօր . և հրաշալի թաղմանդ : ( և ապա . )  
 Հայլ մեր :

18. Բայումն Գերեզմանին Տեսուն :  
 Կամ Զաքիական Բակոր :

( Առագերէցն զգեցեալ շուրջառ , սար-  
 կաւաղօք , դպրովք , և ջահիւք լուցելովք

դայ լոռւթե թափօրապէս 'ի Գերեզմանն  
տն . և ծնրագրեալ երգէ նախ ցածագոյն ,  
և ապա բարձրագոյն ձայնիւ Շարական բչ :)

Փառք քեզ լիցի Երրորդութի , մի համա-  
զոյդ Ածութի . և նախ համայն քան զյա-  
ւիտեանս . և այժմ և միշտ 'ի յարակայս :

( Կրկնի ) :

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն նըյ ,  
Այժմ և միշտ և յաւիտեանս : ( Կրկնի ) :

Քհ : Տը ողորմեա :

Պի : Քա ողորմեա :

Քհ : Տը ողորմեա : Հայր մեր : ( թիւ : )

Քհ : Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն :  
( ձայնիւ : )

Պի : Այլ փրկեա զմեզ 'ի չարէ :

Քհ : 'ի Յարութեան քում քրիստոս , ալէ-  
լուիայ :

Պի : Երկինք և երկիր ուրախանան , ալէ-  
լուիայ :

Քհ : Տը ընդ ձեզ :

Պի : Եւ ընդ հոգւոյդ քում :

## Ալոեւսուս :

Քհ : **Տ**էր մեր յն քա , ած ճշմարիտ և մարդ  
կատարեալ , որ անմահ դոլով յԱծութեղ ,  
'ի տնօրէնուե քում վասն մեր մեղաւորացս  
յանձն առեր ճաշակել զմահ մարմնովդ 'և  
թաղիլ 'ի սիրտ երկրի . որով եղեր ողջակեզ  
ճշմարիտ և զոհ քաւութե 'ի հաշտութիւն  
Հօրդ երկնաւորի , և 'ի հատուցանել դշա-  
տուցումն անբաւ՝ արդարութե նորա : Եւ  
արդ՝ տէր բարերար , երևեցո զերեսս քո 'ի  
մեզ , արի տը ած իմ և օդնեա մեզ , որպէս

ասացեր սբց քոց առաքելոց, եթէ դարձեալ տեսից զձեղ, և ուրախ լիցին սիրտք ձեր. զի հաստատեցուք 'ի հաւատս համօքէն յարուե. որով 'ի յոյս փրկութե մերոյ ամրացեալք, 'ի սէր քո ածային քաղցրասցուք: Եւ խնդութիւն փառաւորեալքո Յարութեղ, յամենայն նեղութիւն մեր՝ լուսուոյ, և ըստ մարմնոյ անսասան պահեցէ զմեղ: Գնեցեր զմեղ տէր անապական արեամբդքով, և այժմ հրաշալի Յարութեամբքո վերածեալ զմեղ առ վայելումն յաւի տենական բարեացդ Քան ած մեր, որ ես օրհնեալ ընդ Հօր և ամենանը Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Պիտ: Ամէն:

( Եւ ապա Քհ. խնկարկէ, և դառնայ Սրբութէն առ ժողովուրդն, սկսանի ցած ձայնիւ, )

Քայ յարեաւ, յարեաւ 'ի մեռելոց:

( Պատասխանեն նոյնպ Սարկաւադունքն և այլք: Զայս երիցս ասէ Քհ. բայց զետինն 'ի ձայն բարձր. և սկսանի թափորն շուրջ գալով զեկեղեցեաւն արտաքոյ: ) Եւ Շարական. Բն. Ընդ արշալոյսն առաւօտուն ևն:

( 'ի դառնալն յԵկեղեցին: Զքեղ ած դոհաբանեմք ( երես 129: ) և զկնի, զնէ զ Սրբութին 'ի մեծ բեմն և խնկարկէ. և ասէ 'ի ձայն: )

Քհ: Յարեաւ մըրն 'ի գերեզմանէն, ալէ լուիայ:

Պիտ: Որ վասն մեր խաչեցաւ, ալէլ:

Քհ: 'ի յարութե քում Քրիստոս, ալէլ:

Պիտ: Երկինք և Երկիր ուրախանան, ալէլ:

( 175 )

ՔՀ : Տ՛ Ընդ ձեզ :  
Պվս : Եւ Ընդ հոգւոյդ քում :

Աշօթեայուս :

ՔՀ : Ի՞չ որոյ ողորմութեղ . ևն . կարգաւ .  
( զոր տես 'ի յերեսն 131 .) տալով և օրհ .  
ճաճանչիւն :

---

---

19. Թատօր 'ի Տօնի Աբյա Մարիսի Աւետարան -  
չի . յորում օրհնին Ամպուայս :

( Կախ զգենու ՔՀ . շուրջառ միմա -  
դոյն . և Արկ' . նոյնպ . 'ի ծունկս անկեալ  
առաջի բեմին առ սակաւ մի . և ապա կանգ -  
նեալ . սկսանի , )

ՔՀ : Լուր մեղ տէր , զի քաղցը է ողորմու -  
թիւն քո , ըստ բազում դժութեան քում  
հայեաց 'ի մեղ տէր :

Աց : Կեցո զիս ած , զի հասին ջուրք յանձն  
իմ :

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ . ըստ  
բազում դժութե քում հայեաց 'ի մեղ  
տէր :

ՔՀ : Քաւիչ լեր մեղաց մերոց տէր :

Պվս : Վա անուան քո :

Աշօթեայուս :

ՔՀ : Կերեա տէր , ներեա տէր ժողովը -  
դեան քում , զի արժանահաս պատժով

( 176 )

խրատեալք , գթութե քով միշտ միսիթարես  
ցի . Քնիւ տերամբ մերով :

Պիւ : Ամէն :

(Ապա 'ի ծունկս անկեալ սկսանի զլի  
թանիան Ամ նբց . ( Երես . 122+ ) մինչև  
ցԱրբուհի Մարիամն . և ապա յառաջանայ  
թափօրն մինչև 'ի դէմ եղեալ դաշտն . յո-  
րում երիցս ասէ , )

ՔՀ : Զի զպտուղս երկրի տալ ✚ և պահ-  
պանել հաճեսցիս : ( Ամենեքին միաբան  
պատասխանեն . )

Զքեղ աղաշեմք լուր մեղ :

( Զկնի աւարտելոյ Լիթանիային . )

ՔՀ : Հայր մեր : ( ասեն , թիւ : )

ՔՀ : ('ի ձայն բարձր : ) Եւ մի տանիր զմեղ  
'ի փորձութիւ :

Պիւ : Այլ փրկեա՛ զմեղ 'ի շարէ :

ՔՀ : Տի լուր աղօթից իմոց :

Պիւ : Եւ աղաղակ իմ առ քեղ եկեսցէ :

ՔՀ : Տի ընդ ձեղ :

Պիւ : Եւ ընդ հոգւոյդ քում :

Աշօնեացու :

ՔՀ : Ամենակարօղ և բարեգութ ած ,  
զնորաբողըոջ արմտիս բարեխառնութեամբ  
օդոյն և անձրեոյ բուսեալս և աճեցեալս ցո-  
ղով օքնութեան քո լցո՞ . և զպտուղ երկրի  
հասունացո՞ . որպէս զի 'ի պարարտութենէ  
երկրի անձինք քաղցելոց առատ պարզեօք  
յագեալք , զքէն միշտ դոհասցին , և զա-  
նունդ փառաց դովեսցեն . տերամբ մերով  
յնիւ քնիւ որդւով քով , որ ընդ քեղ կեայ

և թագաւորէ 'ի միութեն հոգւոյն նըյ ած  
ընդ ամենայն յաւիտեանս յաւիտենից :  
Պիւ : Ամէն :

---

(Առաջին Աւետարան դէպ յարեւելս)

Դպ : Որթի :

Քհ : Խաղաղութի ամենեցուն :

Դպ : Եւ ընդ հոգւոյդ քում : Երկիւղածութիւն լուարուք :

Քհ : Սըյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու :

Դպ : Փառք քեզ տըր ած մեր : Պուօսխումէ :  
Ասէ ած :

'ի հօրէն լուսոյ :

'Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առած, և ած էր բանն : 'Սա էր 'ի սկզբանէ առ ած : Ամ ինչ նովաւ եղեւ, և առանց նորաւ եղեւ և ոչ ինչ, որ ինչ եղեւն : 'Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան : Եւ լոյսն 'ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղեւ հասու : Եղեւ այր մի առաքեալ յայ՝ անուն նմա յովհաննէս : Ստեկն 'ի վկայութիւնի վկայեսցէ վասն լուսոյն . զի ամենեքին հաւատասցեն նովաւ : Ու էր նա լոյսն . այլ զի վկայեսցէ վասն լուսոյն : Էշր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ : Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղեւ, և աշխարհ զնա ոչ ծանեաւ : Յիւրան եկն, և իւրքն զնա ոչ ընկալան : Խակ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւնն որդիս այ լինել . որոց հաւատասցեն յանուն նորա :

Ոյք ոչ յարենէ , և ոչ 'ի կամաց մարմնոյ ,  
և ոչ 'ի կամաց առն . այլ յայ ծնան : Եւ  
բանն մարմին եղեւ , և բնակեաց 'ի մեղ . և  
տեսաք զփառս նորա զփառս իբրև զմիածնի ,  
առ 'ի հօրէ լի շնորհօք և ճշմարտութէ :

Դալ : Փառք քեղ տր ած մեր :

Պիս : Բանն մարմին եղեւ և բնակեցաւ 'ի  
մեղ :

Եւ տեսաք զփառս նորա , զփառս իբրև  
զմիածնի առ 'ի հօրէ լի շնորհօք և ճշմար-  
տութեամբ :

Կց : 'ի սկզբանէ էր բանն , և բանն էր առ  
ած , և ած էր բանն : Եւ տեսաք զփառս նո-  
րա զփառս իբրև զմիածնի առ 'ի հօրէ լի  
շնորհօք և ճշմարտութէ : Փառք հօր և որդ-  
ւոյ և հոգւոյն ուը : լի շնորհօք և ճշմարտու-  
թեամբ :

### Աշօնեայուս :

Քհ : ( Երչնեա ✚ տր զարմոխ մեր , զի լի  
ցին մեղ դեղ փրկարար , և պարգևեա 'ի  
ձեռն փառաւոր անուան քո . զի որք 'ի սո-  
ցանէ առցեն , զառողջութի մտաց և մարմ-  
նոյ և զօդնութի հոգւոյ ընկալցին քնիւ տե-  
րամբ մերով :

Պիս : Ամեն :

(Եկրորդ Աւետարան դէպ 'ի հարաւ)

Դալ : Որթի :

Քհ : Խաղաղ" ամցն :

Դալ : Եւ ընդ հոգ" : Երկիւղած" լուարուք:

ՔՀ : ԱՅ Աւետ' . որ ը Մարկոսի :  
Արկ' : Փառք քեզ : Պրօսլ : Ասէ ած .

ՏԵՇ ԱՆ ՅԱՌ ՅԱՌ :

ՔՀ : ԱՐԻՆՉԵռ բաղմեալ էին մետասանքն ,  
երևեցաւ նոցա , և թշնամանեաց զանհա-  
ւատութիւնոցա և զիստասրտութիւն . զի  
որ երևեցաւ նոցա յարուցեալ 'ի մեռելոց ,  
և նորա ոչ հաւատացին : Եւ ասէ ցնոսա ,  
երթայլք յաշխարհ ամենայն , և քարողեցէք  
զաւետարանն ամ արարածոց : Որ հաւա-  
տայ և մլրտեսցի , կեցցէ . և որ ոչն հաւա-  
տայ , դատապարտեսցի : Նշանք այսոքիկ  
որք հաւատանն , երթիցեն զհետ այնոցիկ .  
յանուն իմ դես հանցեն . լեզուս խօսեսցին .  
'ի ձեռս իւրեանց օճս բարձցեն . և եթէ մահա-  
ցու ինչ դեղ արբցեն , նոցա ինչ ոչ վնա-  
սեսցէ . 'ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն , և  
բժշկեսցեն : Եւ ինքն տր յն յետ խօսելոյն  
ը նոսա՝ համբարձաւ յերկինս , և նստաւ ը  
աջմէ հօր : Եւ նոքա ելեալ քարողէին ընդ  
ամենայն երկիր տն գործակցութք . և ըլ-  
քանն հաստատէին ամ նշանօք որ երթայլ  
զհետ նոցա :

ՊԽ : Երթայլք յաշխարհ ամ , և քարողե-  
ցէք ասելով Ալէլուիա : Որ հաւատացէ և  
մլրտեսցի , կեցցէ . Ալէլուիա . ալէլ' . ալէլ' :  
Կց : Յանուն հօր և որդւոյ և հոդւոյն սըյ ,  
որ հաւատացէ և մլրտեսցի , կեցցէ . Ալէ-  
լուիա . ալէլ' . ալէլ' : Փառք հօր և որդւոյ և  
հոդւոյն սըյ : Ալէլուիա . ալէլ' . ալէլ' :

## Աշօթեացուք :

Քէ : Ամենակարօղ մշտնջենաւոր ած, ինքնակալ տըր թագաւորաց, որ զերկիր յոցնչ արարեր, և զնա 'ի պէտս մեր և 'ի սնունդ մարմնոյ գործել հրամայեցեր : Խոնարհաբար աղաչեմք, զի որինչ յանդս մեր սերմանեալն է և տնկեալ, ըստ բազում գիթութեքում բարեխառնութե օդոյն պահպանեսցի . և ամզազըութի տատասկաց և փշոց արմատախիլ եղեալ պարարտասցի . և բարեպէսհասցի . որպէս զի առաստութեք պարզեաց քոց լցեալք զփառս և զգոհութի մեծի անուանդ քում մատուսցուք . Քնիւ տերամբմերով :

Պիս : Ամեն :

---

( Երրորդ Աւետ<sup>ո</sup> դէպ յարեւմուտս )

Դպ : Որթի :

Քէ : Խաղաղ<sup>ո</sup> ամենեցուն :

Դպ : Եւ ընդ հոգ<sup>ո</sup> : Երկիւղած<sup>ո</sup> Լուա<sup>ո</sup> :

Քէ : Այ Աւետարանիս որ ը Մատթէոսի:

Դպ : Փառք քեզ : Պռօս<sup>ո</sup> : Ասէ ած :

Գիրք ծննդեան յնի քնի որդւոյ դաւթի, որդւոյ աբրահամու : Աբրահամ ծնաւ զի սահակ : Խահակ ծնաւ զյակու : Յակով ծնաւ զյուդա և զեղբարս նորա : Յուդա ծնաւ զփարէս եղզարայ 'ի թամարայ : Փարէս ծնաւ զեզրոն : Եզրոն ծնաւ զարամ : Արամ ծնաւ զամինադաբ : Ամինադաբ ծնաւ զնապասօն : Կաասօն ծնաւ զսազմօն : Սալ-

մօն ծնաւ զբոյս : Բոյս ծնաւ զյօրէթ 'ի  
հռութայ : Յօրէթ ծնաւ զյեսսէ : Յեսսէ  
ծնաւ զդաւիթ արքայ : Դաւիթ արքայ ծնաւ  
զսողոմն 'ի կնոջէն ուրիայ : Սողոմն ծնաւ  
զրօբովամ : Յօրովամ ծնաւ զաբիա : Աբիա  
ծնաւ զասափ : Ասափ ծնաւ զյովսափաթ :  
Յովսափաթ ծնաւ զյովրամ : Յովրամ ծնաւ  
զողիա : Ողիա ծնաւ զյովաթամ : Յովաթամ  
ծնաւ զաքազ : Աքազ ծնաւ զեղեկիա : Ե-  
զեկիա ծնաւ զմաննասէ : Մանասէ ծնաւ զա-  
մն : Ամօն ծնաւ զյովսիա : Յովսիա ծնաւ  
զյեքոնիա և զեղբարս նորա առ գերութեն  
բարիլացւոց : Յետ գերութեն բարիլացւոց  
ծնաւ յեքոնիա զսաղաթիէլ : Սաղաթիէլ  
ծնաւ զգօրաբարէլ : Զօրաբարէլ ծնաւ զա-  
բիուդ : Աբիուդ ծնաւ զեղիակիմ : Եղիա-  
կիմ ծնաւ զաղովը : Ազով ծնաւ զսաղովկ :  
Սաղովկ ծնաւ զաքին : Աբին ծնաւ զեղիուդ :  
Եղիուդ ծնաւ զեղիազար : Եղիազար ծնաւ  
զմատթան : Մատթան ծնաւ զյակոր : Յա-  
կոր ծնաւ զյովսէփ զայրն մարիսմու . որում  
խօսեցեալ զմարիամ կոյս , յորմէ ծնաւ յա-  
որ անուանեցաւ քն :

Պիս : Փառք քեղ տր ած մեր :

Պիս : Երանեալ ես ով նը կոյս մարիամ ,  
և արժանի ամ դովասանաց . վասն զի 'ի  
քէն ծագեցաւ արդարութե արեգակն քն  
ած մեր :

Կց : Բարեխօսեան վասն ժողովրդեան . լեր  
միշնորդ վասն ուխտին եկեղեցւոյ , և վասն  
չերմեռանդն կանանց . ընկալցին զօդնութի  
'ի քէն , որք կատարեն զքոյ նը լյիշատակդ :

## Աշուեցուած :

Քէ : **Տէր ած մեր , որ ՚ի ձեռն մովսէսի  
ծառային քոյ խօսեցար ը որդիսն իսրայէլի  
և ասացեր . յորժամ մտանիցէք յերկիրն՝  
զոր ես տաց ձեղ , և հնձիցէք ղջունձս ձեր ,  
բերիցէք զորայն ղպտուղն հնձոց ձերոց առ  
քահանայն . այսպ զորայս մեր օրհնեա , և  
զօգնութի ողորմութեն հեղ ՚ի սոսա . զի  
մի կարկուտն հարկանիցէ , մի մըրիկն կոր  
ծանիցէ , մի ուժգնութի փոթորկի քանցի  
ցէ , մի տագնապ օդոյն խորշակահար , և  
սաստկութիւն անձրեաց բնաջինջ արացէ  
զսոսա : **Այլ անվնաս պահելով ՚ի պէտս  
հոգւոց և մարմնոց մերոց լիութ հասո՞ քնիւ  
տերամբ մերով :****

Պիս : **Ամէն :**

( Զորբորդ Աւետարանն դէպ ՚ի հիւսիս )

**Դապ : Որթի :**

Քէ : Խաղաղ՝ ամենեցուն :

Դապ : Եւ ընդ հոդ՝ Երկիւ՝ լուարուք :

Քէ : Աբյ Աւետարանիս որ ը Ղուկասու :

Դապ : Փառք քեղ : Պուօս : Ասէ ած :

Քէ : Եւ եղե յաւուրս հերովդի արքայի  
հրէաստանի , քահանայ ոմն անուն զաքա  
րիս ՚ի դասակարգէ աբիսայ , և կին նորա ՚ի  
դստերաց ահարովնի , և անուն նորա եղիսա  
բեթ : Եւ էին արդարք երկոքին առաջի այ ,  
դնային յամենայն պատուիրանս և յիրա-

ւունս տն անարատք : Եւ ոչ դոյր նոցա  
որդեակ, քանզի եղիսաբեթ ամուլ էր, և  
երկորեան անցեալ էին զաւուրբք իւրեանց :  
Եւ եղեւ 'ի քահանայանալ նորա ըստ կար-  
գի աւուրցն հասանելոյ առաջի այ . ըստ  
օրինի քահանայութեանն եհաս նմա խունկ  
արկանել մտեալ 'ի տաճարն տն : Եւ ա-  
մենայն բազմութի ժողովրդեանն կային յա-  
ղօթս արտաքոյ 'ի ժամ խնկոցն : Եւ երևե-  
ցաւ նմա հրեշտակ տն, զի կայր ընդ աջմէ  
սեղանոյ խնկոցն : Եւ խռովեցաւ զաքարիա  
իբրև ետես, և անկաւ ահ 'ի վերայ նորա :  
Ասէ ցնա հրեշտակն տն . մի երկնչիր զաքա-  
րիս, զի լսելի եղեն աղօթք քո . և կին քո ե-  
ղիսաբեթ ծնցի քեղ որդի, և կոչեսցես զա-  
նուն նորա յովհաննէս : Եւ եղիցի քեղ ու-  
րախութիւն և ցնծութիւն . և բազումք 'ի  
ծննդեան նորա խնդասցեն : Զի եղիցի մեծ  
առաջի տն . և գինի և օղի մի արբցէ . և հոգ-  
ւով սրբովլցցի անդստին յորովայնէ մօր  
իւրոյ : Եւ զբազումն յորդւոցն իսրայէլի  
դարձուացէ 'ի տր ած իւրեանց : Եւ ինքն  
եկեսցէ առաջի նորա հոգւով և զօրութք  
եղիայի, դարձուցանել զսիրտս հարց յոր-  
դիս . և զանհաւանս յիմաստութի արդա-  
րոց . պատրաստել տն ժողովուրդ կաղ-  
մեալ :

Պիս : Փառք քեղ մոր ած մեր :

Պիս : 'ի ծնունդս կանանց չէ յարուցեալ  
մեծ քան զյովհաննէս մկրտիչ . որ զՃանա-  
պարհս տն պատրաստ արար յանապատէ :  
Կց : Եղեւ այր մի առաքեալ յայ անուն նմա  
յովհաննէս . որ զՃանապարհս տն պատ-  
րաստ արար յանապատի : Փառք հօր և

( 184 )

որդւոյ և հոգւոյն նըյ , որ զՃանապարհս ոնց  
պատրաստ արար յանապատի :

Աղօթեսցուս :

ՔՀ : **Տ**ը սբ հայր ամենակարօղ յաւիտե-  
նական ած , առաքեա զնբ հրեշտակս քո ,  
որը եկեալ պահեսցեն զարմտիս մեր յոր-  
դանց , 'ի թռչնոց և 'ի մարախոց . զի այսու  
մեծասցի անուն քո յամ տեղիս . տերամբ  
մերով Յնիւ Քնիւ որդւով քով , որ ը քեզ  
կեայ և թադաւորէ 'ի միութեն հոգւոյն սըյ  
ԱՃ , ընդ ամ յաւիտեանս յաւիտենից :

Պիս : Ամեն :

( Եթէ դոն և Այդիք , ասել պարտ է և  
դհետեւեալ Աղօթս : )

Աղօթեսցուս :

Տը ած մեր , որ զորթս հոգեոր այլւոյ  
քո ընդ բոլոր տիեզերս երկրի տարածեցեր .  
զայգեղործուի լերանց մերոց 'ի զործս բա-  
րիս առաջնորդեալ յաջողեա . հեղ յայգիս  
մեր զցող օրհնութեն ✚ քոյ . և յամ վսասա-  
կարութեց զսոսա պաշտպանեալ առատու-  
թբ պտղոց լցո՞ , քնիւ տերամբ մերով :

Պիս : Ամեն :

Աղօթեսցուս :

Տէր նբ հայր ամենակարօղ յաւիտե-  
նական ած , որ զերկինս , զերկիր , զծով և  
զամենայն ինչ արարեր : Զպտուղս երկրի  
օրհնեալ ✚ սրբեա և բազմացո՞ . և լից զիե-

նետունս , և զբնակութիւնս մեր լիութեցորենոյ և գինւոյ . զի ուրախացեալք՝ ի նոսին զօրհնութիւն և զգոհութիւնս քեզ հանցուք . տերամբ մերով յնիւ քնիւ , որ ընդքեզ կեայ և թագաւորէ՝ ի միուն հոգւոյն նըյ ած ը ամ յաւիտեանս յաւիտենից :

Պիտ : Ամէն :

Քէ : Եւ օրհնութիւն այ ամենակարօղին հօր ✚ և որդւոյ և հոգւոյն նըյ , իջցէ՝ ի Վը արմտեացս , և մնասցէ միշտ :

Պիտ : Ամէն :

Կց : Օրհնեսցուք զնոր . ալէլուիա . ալէլ .  
ալէլ :

Պիտ : Այ գոհութիւն . ալէլ . ալէլ . ալէլ :

( Ապա դառնայ թափօրն երդելով ըսուվութե . կամ , Յն որդի այ կենդանւոյ . ողորմեամ մեղ ևն : և կամ . Մարիամ մայր ածային շնորհաց : Խնդրեա զած ևն . և ի մերձենալն յԵկեղեցին , սկսանին . Զքեզ ած գոհաբանեմք . զնի Մասնատուփն , այսինքն ձիպօրիում . զկնի երդոցն ասի և Ազօթք նը . (երես 129:) ապա Օրհնութիւն . Եղեցի անուն նոն :

20. Թատօր Ամենապէ Խորհրդոյ Մարիոյ և  
Աբեան Տեսան երոյ Յնի Քնի Քնի :

( Ա պագերէցն զգեցեալ շուրջառ , և ամ կղերիկոսք զգեցեալք ըստիւրեանց աստիճանի , և ամ զարդուք դայ ի մեծ բեմն . և խընկարկեալ զնոր սրբացուցեալ Արքութիւն որ եղեալն է ի ճաճանչի , դառնայ նովաւ առ

Ժողովուրդն , և սկսանի ձայնիւ : )

ՔՀ : Երգեա լեզու ըղիքաշալի ,  
 ՊԽ : ԱՄարմնոյ խորհուրդ ըն տէրունի ,  
 այլև զԱրեան պատուականի .  
 զոր ՚ի փրկանս ետ աշխարհի ,  
 այն որ պըտուղ կոյս արգանտի ,  
 Արքայ հանուրց աղգաց երկրի :  
 (Եւ ելանէ թափօրն անմիջանկ , երգելով  
 զմնացորդն : )

Կա մեղ տըւաւ , և մեղ ծընաւ .  
 յամբիծ կուսէ ընծայեցաւ .  
 յաշխարհի աստ կենցաղեցաւ ,  
 բանին սերմամբ տարածեցաւ .  
 զելք կենացն յոր վարեցաւ ,  
 ըսքանչելի կընքեաց կարգաւ :  
 Դ գեշերի յետին ընթրեաց ,  
 բազմեալ ընդ իւր աշակերտաց ,  
 պահեալ խսպառ զքան օրինաց ,  
 ըստ կերակրոց խըտրականաց .  
 Երկոտասան խըմբին ընտրած ,  
 զանձն ետ ուտեստ իւրոց ձեռաց :

Բանըն մարմին զհաց բընական ,  
 բանիւ արար մարմին ինքեան ,  
 զգինին արիւն քրիստոսական :  
 ըզգայութի չէ յայս ժաման ,  
 բաւական է հաւատք միայն :

Արդ զայս խորհուրդ աստուածական ,  
 մեծարեսցուք խոնարհական :  
 և հին ուսումն օրինական ,  
 տացէ տեղի նորոյս պաշտման .  
 հաւատք լիցին տըւօղ լրման ,  
 ըղգայութեանցըն թերութեան :

Ճընողին Հօր, և ծընելոյն,  
տացի գովեստ և ցնծութիւն .  
փրկութիւն , յարդ , և զօրութիւն ,  
անհատական օրհներգութիւն .  
և յերկոցունց Բղիսեցելոյն ,  
զոյդ հաւասար փառատրութիւն :  
Ամէն :

( Թէպէտ 'ի ճանապարհին յետին երկու  
տունքն ոչ ասին : )

---

### ԲԵՄԱ:

(ՔՀ: Ճանգուցանէ ղՃ'աճանշն, խնկարկէ,  
և կանգնի 'ի կողմն բեմին : ՔՀ: Ընթերցօղն  
Աւետ". առնու զօրհնութի 'ի յԱւագերի-  
ցուէն . և կանգնի 'ի վայր 'ի միւս կողմն բե-  
մին : Այսպէս առնեն յամ բեմն : )

Արկ": Որթի:

ՔՀ: Խսաղաղութի ամցն :

Պի: Եւ ընդ հոգւոյդ քում . ևն :

ՔՀ: ԱՇՅ աւետարանիս , որ ը Յովհաննու :

ԳԼ. Դ. 56 :

Արկ": Փառք քեզ տէր ած մեր : Պոօմխու-  
մէ , և այլն :

Տըն մեր Յո քո ասէ :

ՔՀ: Արամին իմ Ճշմարիտ կերակուր է , և  
արիւն իմ Ճշմարիտ ըմպելի է : Որ ուտէ ըզ-  
մարմին իմ , և ըմպէ զարիւն իմ , յիս ընա-  
կեցի , և ես 'ի նմա : Որպէս առաքեաց զիս  
կենդանին հայր , և ես կենդանի եմ վո հօր .  
և որ ուտէն զիս , և նա կեցցէ վասն իմ : Այս

է հացն՝ որ յերկնից իջեալ ոչ որպէս կերին  
հարքն ձեր զմանանայն, և մեռան. որ ուտէ-  
զհացս զայս կեցցէ յաւիտեան :

Պլս: Փառք քեզ տը ած մեր :

(Ապա Երդ մի ՚ի պատիւ Հաղորդութեն.  
և զկնի, )

Քհ: ( Ճայնիւ .) Կերակրեաց զնո՞ ՚ի պարար-  
տութեն ցորենոյ . ալէլուիայ :

Պլս: Եւ ՚ի վիմէ մեղը յակեցոյց նոցա , ա-  
լուիայ :

### Աղօնեացու :

Քհ: **Տ**էր ած , որ մեզ ՚ի ներքոյ հրաշալի  
խորհրդոյս զյիշատակ չարչարանաց քոց թու-  
ղեր. շնորհեա աղաշեմք՝ զնբ խորհուրդս մարմ-  
նոյ և արեան քո այնող պաշտել , զի զպտուղ  
փրկութեն քո ՚ի մեզ միշտ զգացուք , որ կեաս  
և թագաւորես ՚ի միութեն հոգւոյն նըյ Ած  
՚ի յաւիտեանս յաւիտենից :

Պլս: Ամէն :

( Դարձեալ Երդ մի , զոր յԵրդելն . Քհ .  
խնկարկէ . և զկնի , )

Քհ: ( Ճայնիւ ) Եղիցի անուն Տի՞ օրհնեալ :

Պլս: Յայսմ հետէ մինչեւ յաւիտեան :

Քհ: Օդնութի է մեր յանուն տն :

Պլս: Որ արար զերկինս և զերկիր :

Քհ: Օրհնութի Այ ամենակարողին Հօր  
† և Որդւոյ և Հոգւոյն նըյ , իջցէ ՚ի վերայ  
ձեր և մնացէ միշտ :

Պլս: Ամէն :

( Այսպիսի է արարողութին և այլ բեմից .  
և Երդելով զայլ Երդ ՚ի պատիւ Հաղորդութեն,  
զնայ թափօրն յերկըորդ բեմն : )

## Բ Ե Մ Բ .

**Արկ": Արթի:**

Քհ: Խաղաղութի ամցն :

**Արկ": Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիւղածութել լուարուք:**

Քհ: Արէ Աւետարանիս որ և Ղուկասու .  
Գլ. Ճա . 9 :

**Արկ": Փառք քեզ տր ած մեր: Պռօսխումէ:**  
**Ասէ ած:**

**Տըն մեր Յն Քն ասէ:**

**Եւ ես ասեմ ձեղ, խնդրեցէք և տացի ձեղ. Հայցեցէք, և դոջիք. բաղխեցէք, և բացցի ձեղ: Զի ամենայն որ խնդրէ առնու. և որ հայցէ դուանէ. և որ բաղխէ բացցի նմա: Ցո՞ ոք 'ի ձէնչ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկան օձ տայցէ նմա: Եւ կամ խնդրիցէ ձու, միթէ կարիճ տայցէ նմա: Իսկ եթէ դուք՝ որք չարքդ էք, դիտէք պարզես բարիս տալ որդւոց ձերոց, որչափ ևս առաւել հայրն ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ, որք խնդրեն 'ի նմանէ:**

**Պիս: Փառք քեզ տր ած մեր:**

Քհ: Զհաց երկնից ետ նց. ալէլուիա:

**Պիս: Զհաց հրեշտակաց կերին մարդիկ, ալէլուիա:**

**Աւօնեսուս:**

Քհ: **Տէր ած բարձրեալ, ամենակալ, լոյս անքննին, մեծութի ահեղ, մարդասիրութի**

օրհնաբանելի : Հայր տն մերոյ Յնի Քնի, որ  
զհրաշալի խորհուրդ մարմնոյ և արեան Տն  
մերոյ Յնի Քնի, միաձնի որդւոյ քոյ, ուխտ  
կենաց սահմանեցեր 'ի մեղ . և անսահմանե-  
լի գթութեղ կամեցար զի միշտ մնասցէ ընդ  
մեղ : Տուր մեղ աղաչեմք, զի այնպէս պաշ-  
տեսցուք զայս խորհուրդ յերկրի, զի տեսու-  
թե նորա, և ընդունելութե, արժանի լի-  
ցուք Երկնային ուրախուեցն ը Քնի փրկչին  
մերոյ . որ ընդ քեղ թագաւորէ 'ի յերկինս  
յանսպառ յաւիտեանս :

Պիս : Ամէն :

Քհ : Եղիցի անուն տն օրհնեալ . ևն ( ող 'ի  
ա . բեմն : )

### Բ Ե Մ Գ.

Արկ' : Որթի :

Քհ : Խաղաղութի ամցն :

Պիս : Եւ ընդ հոգւոյդ քում : Երկիւղածու :

Քհ : Սէյ Աւետարանիս որ ը Մարկոսի :  
Գլ. ծա . 23 :

Պիս : Փառք քեղ տր ած մեր , ևն :

Տըն մեր Յն Քն ասէ :

Քհ : Ա ասն այսորիկ ասեմ ձեղ, զամինն  
վասն որոյ աղօթս արարեալ խնդրիցէք . և  
հաւատայցէք թէ առնուցուք, եղիցի ձեղ :  
Եւ յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք,  
Եթէ ունիցիք ինչ զումեքէ . զի հայրն ձեր որ  
յերկինս է թողցէ ձեղ զյանցանս ձեր : Զի  
Եթէ դուք ոչ թողուցուք, և ոչ հայրն ձեր՝ որ  
յերկինս է, թողցէ ձեղ զյանցանս ձեր :

Պլս : Փառք քեղ տր ած մեր :  
 Քհ : Զհաց յերկնից պարզեցեր նոցա, ա-  
 լըլուիայ :  
 Պլս : Որ ունի զամ զուարձութի յինքեան,  
 ալըլուիայ .

## Աշօնեացաւ \*

Քհ : **Ա**ղաչեմք և պաղատիմք արտասուա-  
 խառն հառաջմամք տէր, լց' զտրտմագին  
 սիրտս մեր ածային և երկնաւոր քոյ զմայլ-  
 մամբդ . զոր տաս միայն նոցա, որք զմար-  
 մին և զարիւն քո արժանապէս ընդունին :  
 Զի յայսմծանիցուք զքո առ մեղ մարդասի-  
 րութի . և քեղ փառս մատուցուք ը Հօր  
 քո ամենակալի, և ընդ Հոդոյ քո միսիթար-  
 չի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-  
 նից :

Պլս : **Ամէն :**  
 Քհ : Եղեցի անուն ան ևն . ( որպէս 'ի ա-  
 բեմն : )

---

## Բ Ե Մ Դ :

Արկ' : Որթի :  
 Քհ : Խաղաղութի ամցն :  
 Պլս : Եւ ընդ հոդոյդ ևն :  
 Քհ : Ար Աւետարանիս . որ ը Յովհաննու =  
 գլ. ա . 1 :  
 Արկ' : Փառք քեղ տր ած մեր, ևն :

'ի Հօրէն լուսոյ :

Քհ : 'Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ

ած , և ած էր բանն : « Սա էր 'ի սկզբանէ առ ած . ամ ինչ նովաւ եղեւ , և առանց նր եղեւ և ոչինչ՝ որ ինչ եղեւն : » Առվաւ կեանք էր , և կեանքն էր լոյս մարդկան : Եւ լոյսն 'ի խաւարի անդ լուսաւորէ , և խաւար նմառ էղեւ հասու : Եղեւ այր մի առաքեալ յայ՝ անուն նմա յովհաննէս : Սա եկն 'ի վկայութի , զի վկայեսցէ վասն լուսոյն . զի ամքին հաւատացեն նովաւ : Ոչ էր նա լոյսն , այլ զի վկայեսցէ վասն լուսոյն : Էր լոյսն ձշմարիտ . որ լուսաւոր առնէ զամմարդ՝ որ դալոց է յաշխարհ : Յաշխարհի էր և աշխարհ նովաւ եղեւ , և աշխարհ զնա ոչ ծանեաւ : Յիւրսն եկն , և իւրքն զնա ոչ ընկալան : Իսկ որք ընկալանն զնա , ետ նոցա իշխանութի որդիս այլ լինել , որոց հաւատացեն յանուն նր : Ոյք ոչ յարենէ , և ոչ 'ի կամաց մարմնոյ , և ոչ 'ի կամաց առն , այլ յայ ծնան : Եւ բանն մարմին եղեւ , և բնակեաց 'ի մեղ . և տեսաք դփառս նր , զփառս իբրև զմիածնի առ 'ի հօրէ . լի շնորհօք և ձշմարտութք :

**ՊԽ:** Փառք քեղ տր ած մեր :

**ՔՀ:** Հաներ զհաց յերկրէ , ալէլուիայ :

**ՊԽ:** Եւ գինի ուրախ առնէ զսիրտ մարդոյ , ալէլուիայ :

### Աշտեսյուտ :

**ՔՀ:** **S**ը ած ամենակալ , արարիչ ամենայնի , որ մարդասիրութք քով խնամես զամ արարածս . որ լսողդ ես ձայնի խնդրուածոց ժողովրդեան : Լուր և այժմ մարդասէր տրաղօթից ժողովրդեանս : Պահեա՛ զԱռաջնորդ զըն հաւատոց մերոց զԱրքաղան Պապն զՏէ

(ԱՆ). և զԵրջանիկ Եպիսկոպոս դաւառիս  
դՏԾ (ԱՆ:)

Ամրացն և անվտանգ պահեա՛, ի թշնամեաց  
բոնութէ զտէրութի և զիշիանութի բարե-  
պաշտ Թագաւորին մերոյ (ԱՆ: ) Տուր նմա  
զերկայն աւուրս, կառավարեա՛ զնա ըս հա-  
ճոյից կամաց քոց : Պահեա՛ զբաղաքս զայս  
փոքր յԵրեսաց թշնամեաց, 'ի մահտարաժա-  
մէ, 'ի սովէ, 'ի հրոյ և 'ի պատերազմէ . և  
յամ երեելի և յաներեոյթ փորձանաց 'ի  
հոգեսորաց և 'ի մարմնաւորաց : Եւ զժողո-  
վուրդ քաղաքիա՝ որ յանուն քո այսօր ժո-  
ղովեալ են յայս թափօր, օրհնեա՛ յԵրկնից  
'ի պատրաստ բնակութէդ քումմէ : Պահեա՛  
զսոսա ՚ի չարէ, զորս մարմնովդ կերակրես,  
և արեամբդ գնեցեր :

ԱՃեցն տր և զմիաբանուի կրօնաւորացն,  
և պահեա՛ 'ի թշնամեաց չարութէ 'ի ծա-  
ռայութի արեամբ զնեալ քո հօտիդ . բարե-  
խօսութէ նր ԱՃածնի անարատ ծնողի քո .  
և աղաչանօք նըյն Գրիդորի մերոյ Լուսա-  
ւորչն . և նըյ Հօրն մերոյ Անտօնի Աբբայի .  
զի քո եմք տր, և 'ի քոյ գթուիդ եմք ապա-  
ւինեալ, և քեղ փառք հանդերձ Հարբդ, և  
ամենանբ Հողւովդ, այժմ և յաւիտեանս  
յաւիտենից :

ՊԽ : Ամէն :

ՔՀ : Եղիցի անուն են ևն . (որպէս 'ի ա-  
բեմն) :

(Եւ 'ի դառնալ թափօրին յԵկեղեցին,  
Զքեղ ած գոհաբանեմք . (տես երես 129.)  
այլև Ազօթք նորա ևն : և ապա ՔՀ . խընկ-  
արկէ զՄըրբութիւնն, և դառնայ առ ժողո-  
վուրդն . սկսանելով . )

( 194 )

Արդ՝ ղայս խորհուրդ՝ ածական։  
ՊԽ : Մեծարեացուք խոնարհական եւ :  
ՔՀ : Ծնողին Հօր եւ :  
ՊԽ : Տացի գովեստ՝ և ցնծութիւն :  
( ՔՀ : տայ օրհնութիւն Ճաճանչիւ 十字 և  
խնկարկելով դնէ՝ ի տեղւոջ իւրում, և ա-  
պա, )  
ՔՀ : Զհաց յերկնից պարզեցեր նոցա. ա-  
լէլուիայ :  
ՊԽ : Որ ունի զամ զուարձութիւն յինքեան,  
ալէլ :  
Աշօնեացուն :

ՔՀ : Տէր ած, որ մեղ՝ ի ներքոյ հրաշալի  
խորհրդոյս զյիշատակ չարչանաց քոց թո-  
ղեր, շնորհեա աղաւեմք, այնպէս զնը խոր-  
հուրդս մարմնոյ և արեան քո պաշտել, զի  
զպտուղ փրկութե քո՝ ի մեղ միշտ զգացուք.  
որ կեաս և թագաւորես՝ ի միութե Հոգւոյն  
ուր Աֆ,՝ ի յաւիտեանս յաւիտենից :  
ՊԽ : Ամին :  
( Անմիջապէս զինի այսր աղօթից փակի  
Ճաճանչն յիւրում տեղւոջ, և ապա արձա-  
կին խաղաղութե : )

---

21. Մաշնոնք ուս Աֆ :

՚Ի լինել Մըրկաց :

( Կախ ասի Լիթանիայն ամ Աբ ( Բ-  
10 .) յոբում զինի ասելոյն. Զի ամ հաւա-  
տացեալ ննջեցելոց ևն. ասասցէ ՔՀ. երից.  
՚Ի կայծականէ և՝ ի մըրկէ. և պատասխա-

նեսցեն: Ազատեա զմեղ տր: Եւ ապա զմնացորդն Լիթանիային կատարեսցեն, այսինքն. Զի զինդրուածս մեր լուիցես. ևն: Զկնի Լիթանիային, )

Քչ: Հայր մեր: ( ՚ի թիւ: Ապա, )

Քչ: Եւ մի տանիր զմեզ ՚ի փորձուի: ( ձայնիւ: )

ՊԽ: Այլ փրկեա զմեղ ՚ի չարէ:

Աղմ. ճիշտ: ( ձայնիւ: ) Գովեա երուսաղէմ զտը, և օրհնեա զած քո սիօն:

Զի զօրացոյց զնիզս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ՚ի քել:

Ո եղ զսահմանս քո ՚ի խաղաղութիւ, պարաբութիւ ցորենոյ լցոյց զքեզ:

Առաքէ զբան իւր յերկիր, վաղվաղ ընթանան պատդամք նր:

Դնէ զձիւն ոնկ զասր, և զմէդ ոնկ փոշիցանեաց:

Արկանէ զսառն ոնկ պատառս, առաջից ցրտոյ նր ու կարէ կեալ:

Առաքէ զբան իւր և հալէ զնս, շնչեցեն հողմք և գնասցեն ջուրք:

Պատմէ զբան իւր յակոբայ. զարդարուի և զիրաւունս իսրայէլի:

Ոչ այսող արար նամաղդաց տր, և զդատատառնս իւր ոչ յայտնեաց նց:

Փառք Հօր և Որդւոյ ևն:

Քչ: Օզնութիւ մեր յանուն տն:

ՊԽ: Որ արար զերկինս և զերկիր:

Քչ: Ցոյց մեզ տր զողորմութիւս քո:

ՊԽ: Եւ զփրկութիւս քո տուր մեզ:

Քչ: Օզնեա մեզ ած փրկիչ մեր:

ՊԽ: Եւ վասն վառաց անուան քո փրկեա զմեզ:

ՔՀ : ՄԵ մեղիցէ թշնամին մեղ :  
 ՊԽ : Եւ որդին անօրէնութե մի չարչարեսցէ  
 զմեղ :  
 ՔՀ : Եղիցի ողորմութի քո 'ի վր մեր :  
 ՊԽ : Որպէս յուսացաք 'ի քեղ :  
 ՔՀ : Կեցն տը զժողովուրդս քո :  
 ՊԽ : Եւ օրհնեա զժառանգութիս քո :  
 ՔՀ : ՄԵ պակասեսցի 'ի նոցանէ ամ բարու  
 թի , որք գնան յամբծութե :  
 ՊԽ : Տը ած զօրութեց , երանեալ է այր՝ որ  
 յուսայ 'ի քեղ :  
 ՔՀ : Տը լուր աղօթից իմոց :  
 ՊԽ : Եւ աղաղակ իմ առ քեղ եկեսցէ :  
 ՔՀ : Տը լնդ ձեղ :  
 ՊԽ : Եւ լնդ հոգւոյդ քում :

### Աղօնեսցուք :

ՔՀ : Լ ծ , որ խնդրես զվրէժս մեղաց , և  
 կամիս ղդարձ և զապաշխարութիւն մեղա-  
 ւորաց . հայեաց քաւիչ տէր 'ի խնդրուածս  
 ժողովրդեան քո՝ որք առ քեղ պաղատին . և  
 յետոս դարձն զհարուածս բարկութ քո , որոց  
 արժանի եմք վասն մեղաց մերոց :  
 'Ի տանէ քումմէ աղաշեմք տը , աներեսոյթ  
 պատահարքն մերժեսցին . և օդային մրրկացն  
 վսասակար աղղեցութիւնքն դաղարեսցին :  
 Ամենակալ մշտնջենաւոր ած , խնայեա  
 յահաբեկեալս . քաւեա , զրոս առ քեղ պա-  
 ղատիմքս . զի զկնի վսասակար հրային ամ  
 պոց , և բռնութե մրրկացն , նոյն սպառնա-  
 լեք փոթորկացն զմեղ դարձուացեն 'ի գո-  
 վել և 'ի փառաբանել զդժութիւն ողորմու-  
 թեդ քո :

ՏՌ յ՛ս, որ հրամայեցեք հողմոց և ծովու, և եղեւ հանդարտութիւն մեծ : Լուր աղա-  
շանաց ծառայից քոց, և շնորհեաւ զի նշա-  
նաւս նըյ խաչին ✚ խռովեալ յուղմունք  
մբրկացն կարկեալ դադարեսցին :

Ամենակարօղ և ողորմած ած, որ զմեղ  
և խրատելով առողջացուցանես, և ներելով  
պահես, շնորհեաւ խնդրողացս 'ի քէն, զի խա-  
ղաղական հանդարտութե ըղձալի միսիթա-  
րութեն ուրախասացուք, և պարզեօք գիթու-  
թեանդ քո վարեսցուք զկեանս մեր, 'ի ձեռն  
տն մերոյ Յնի Քնի . որ է օրհնեալ ընդ քեղ  
և ընդ Հոգւոյդ նըյ 'ի յաւիտեանս :

Պիւ : Ամէն :

(Ապա տայ Օրհն' . Եղեցի անուն տն :

22 . Մաղթանք առ ԱՃ :

'Ի խնդրել դանձրե :

( Ա սի նախ 'ի պատարագին Աիթանիայ  
Աժ սբց ( Ակ 10 . ) այնպէս, զի յաւարտիլ  
պատարագին, աւարտեսցի և յետին տունն,  
յի, Զի ամ հաւատացեալ ննջեցելոց ևա :  
Որպէս զի ասասցէ երիցս,  
Քհ : ( 'ի ձայն : ) Զի զկարեօր անձրե քաղը  
ցրութե հաւատացելոց քոց շնորհեսցես : ( և  
ապա ) Զի զինդրուածս մեր լուիցես . ( ևն որ  
'ի կարգին . և զկնի , )

Քհ : Հայր մեր : ( 'ի թիւ : )

Քհ : Եւ մի տանիր զմեղ 'ի փորձութիւն :  
( ձայնիւ : )

Պիւ : Այլ վրկեաւ զմեղ 'ի չարէ :

Աղմ. Ձիու: ( Ճայնիւ: ) Օրհնեցէք զտր զի  
բարի է, սաղմոս այ մերում քաղցր եղիցի  
օրհնութիւն:

Ծինէ զեղէմ տր, և դցրուեալսն իօրայէլի  
ժողովէ:

Բժշկէ զբեկեալ սիրտս, և պատէ զամե-  
նայն վէրս նոցա:

Ո թուէ զբաղմութիւն աստեղաց, և զա-  
մենեսեան զնոսա յանուանէ կոչէ:

Մեծ է տր ած մեր, և մեծ է զօրուի նո-  
րա, իմաստութեան նորա ոչ գոյ բաւ:

Ընդունի զհեզս տէր, և խոնարհ առնէ  
զմեղաւորս մինչև յերկիր:

Օրհնեցէք զտր խոստովանութը, սաղ-  
մոս ասացէք նմա օրհնութը:

Որ զգեցոյց զերկինս ամպովք, պատրաստ  
արար զանձրև իւր յերկիր:

Բուսոյց զիսոտ 'ի լերինս, և զդալարի 'ի  
ծառայութի մարդկան:

Ո տայ անասնոց կերակուր, ձագուց ադ-  
ռաւուց, որք կարդան առ նա:

Ու թէ ընդ զօրութիս ձիոյ կամեցաւ տր,  
և ոչ ընդ իրանս առն հսկայի հաճեցաւ:

Այլ հաճեցաւ տէր ընդ երկիւղածս իւր,  
և ընդ այնոսիկ որք յուսան յողորմուի նր:  
Փառք հօր և որդւոյ եռ:

Քհ: Զգեցն տէր զերկինս ամպովք:

Պիս: Եւ պատրաստ արա երկրի զանձրև:

Քհ: Զի բուսուսցէ զիսոտ 'ի լերինս:

Պիս: Եւ զդալարի 'ի ծառայութի մարդկան:

Քհ: Արբուցանէ զլերինս 'ի շտեմարանաց  
իւրոց:

Պիս: Եւ 'ի պտղոյ դործոց իւրոց լցի եր-  
կիր:

( 199 )

Քհ: ՏԵՐ ԼՈՒՐ աղօթից իմոց :  
Պիս: Եւ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ :  
Քհ: ՏԵՐ ԸՆԴ ձեզ :  
Պիս: Եւ ԸՆԴ հոգւոյդ քում :

Աշօնեացոտք :

Քհ: ԱՌ, յորում կեամք, շարժիմք և եմք,  
պարզենա՞ մեզ զանձրե զկարեորն . որոյ  
նպաստիւքն բաւականանդ առլցեալք, յօ-  
ժարամիտ և վստահ սրտիւ զյաւիտենական  
բարիսն փափագեսցուք :

Ծնորհեա՞ աղաչեմք ամենակարօղ ած, զի  
որք ՚ի վիշտս մեր ՚ի քոյին գթութիդ եմք ա-  
պաւինեալ, պաշտպանութե հզօրիդ կարո-  
ղութեն՝ ամրացուք ընդդէմ ամենայն ներ-  
հական պատահարաց :

ՏՌՈՒՐ մեզ աղաչեմք տէր՝ զկենդանարար  
անձրե . և ՚ի ցամաքեալ երեսս երկրի հեղցես  
զերկնային հոսանս անձրեացն քաղցրութե,  
՚ի ձեռն տն մերոյ Յնի Քնի . որ է օրհնեալ  
ընդ Հօր և ը Հոգւոյդ նըյ ՚ի յաւիտեանս :

Պիս: Ամին :

Քհ: ՏԵՐ ԸՆԴ ձեզ :

Պիս: Եւ ԸՆԴ հոգւոյդ քում :

Քհ: ՕՐՀՆԵՍՑՈՒՔ զտր :

Պիս: ԱՅ գոհութի :

Քհ: Լուիցէ մեզ ամենակարօղ և ողոր-  
մած տէրն :

Պիս: Ամին :

( Ապա ՕՐԴԻ ԵՂԵցի անուն տն : )

## 25. Ապղեանս առ ած :

'Ի իսնդրել զպարզութիւն օդոց :

( Ամի 'ի պատարագին Ախթանիայն Ամսէց ( Ակ 10. ) այնպէս որպէս 'ի վերոյ ասացաւ ( Երես 197 : ) Քհ : Երիցս ( ձայնիւ ) Զի հաւատացելոց քոց զպարզութիւն օդոց շնորհել հաճեսցիս . և յաւարտիլն , )  
Քհ : Հայր մեր : ( 'ի թիւ : )  
Քհ : Եւ մի տանիր զմեղ ՚ի փորձութիւն :  
( ձայնիւ : )

Պլս : Այլ փրկեա՛ զմեղ ՚ի չարե՛ :

Աղմ : Կլ : ( ձայնիւ : ) Ած ողորմեա՛ մեղ ,  
և օրհնեա՛ զմեղ . Երևեցո՛ զերեսս քո ՚ի մեղ ,  
և ողորմեա՛ մեղ :

Ճանաչել յերկրի զճանապարհս քո , յաւ զինս ամ զփրկութիւն քո :

Խոստովան Եղիցին առ քեղ ժողովուրդք ած , խոստովան Եղիցին առ քեղ ժողովուրդք ամ :

Ուրախ Եղիցին և ցնծասցեն ազինք , զի դու դատես զժողովուրդս յուղղութեան ,  
և ազգաց Երկրի դու առաջնորդես :

Խոստովան Եղիցին առ քեղ ժողովուրդք ած , գոհասցին զքէն ժողովուրդք ամ :

Երկիր ետ զպտուղ իւր , և օրհնեաց զմեղ ած , ած մեր :

Ած մեր օրհնեսցէ զմեղ , և 'ի նմանէ Երկիցեն ամ ծագք Երկրի :

Փառք Հօր և Որդւոյ եւ :

Քհ : Ածեր նոր զհողմ քոյ ՚ի Վեր Երկրի :

Պիս : Եւ արդելան անձրեք յերկնից :  
 Քհ : Յորժամ պատեցից զերկինս ամապովք :  
 Պիս : Երևեսցի աղեղն իմ, և յիշեցից զուխտ  
 իմ :  
 Քհ : Երևեցով զերեսս քո տը 'ի ծառայքս քո :  
 Պիս : Եւ օրհնեա զյուսացեալքս 'ի քեղ :  
 Քհ : Տը լուր աղօթից իմոց :  
 Պիս : Եւ աղաղակ իմ առ քեղ եկեսցէ .  
 Քհ : Տէր ընդ ձեղ :  
 Պիս : Եւ ընդ հոգւոյդ քում :

## Աշօնեացուք :

Քհ : **Ա**նձ, որ խնդրես զվրէ ժս մեղաց, և կա-  
 միս զդարձ և զապաշխարութիւն մեղաւորաց .  
 Հայեաց քաւիչ տը 'ի խնդրուածս ժողովը-  
 դեան քո՝ որք առ քեղ պաղատին . և յետս  
 դարձով զհարուած բարկութեն քո, որոց ար-  
 ժանի եմք վասն մեղաց մերոց :

**Լ**ուր մեղ տը, որ կարդամք առ քեղ, և  
 պարդեեա մեղ խնդրողացս զպարզութիւն  
 օղոց . զի որ իրաւամբք վշտանամք վասն մե-  
 ղաց մերոց, ժամանելով ողորմուեն քո զգը-  
 թութիւնդ վայելեսցուք :

**Ա**մենակարօղ ած, աղաչենք զգթութիւն  
 մարդասիրութենդ քո, զի զհեղեղ յորդ անձ-  
 րեացն դադարեցուսցես . և զուարթու-  
 թեն երեսաց քոց մասնաւորիլ զմեղ արժա-  
 նացուսցես, տերամբ մերով Յնիւ Քնիւ, ը-  
 որում քեղ Հօր ամենակարողի և Հոգւոյդ  
 նըյ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ,  
 այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից :

Պիս : Ամէն :

( Աղա տայ Օրհ. Եղիցի անուն տն : )

24. Արարական առ Աֆ:

'Իժամանակի սովոր:

( Ասի 'ի պատարագին Աթանային Աֆ  
նբց . ( Ահ 10 . ) այնպէս , որպէս ասացաւ  
( Երես 197 : ) Քհ . ( Ճայնիւ : ) Երիցս . Զի ըզ  
պտուղս Երկրի տալ և պահպանել կամես.  
ցիս . և զկնի , )

Քհ : Հայր մեր : ( 'ի թիւ : )

Քհ : Եւ մի տանիր զմեղ 'ի փորձութիւն:  
( Ճայնիւ : )

Պիս : Այլ փրկեալ զմեղ 'իշարէ :

Աղմ: Իք : ( Ճայնիւ : ) Տէր հովուեսցէ զիս ,  
և ինձ ինչ ոչ պակասեսցի :

'Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս ,  
և առ ջուրս հանդստեան սնոյց զիս :

Դարձոյց զանձն իմ առ իս , և առաջնոր.  
դեաց ինձ 'ի ճանապարհս արդարուել վասն  
անուան իւրոյ :

Թէպէտ և գնացից ես 'ի մէջ ստուերաց  
մահու , ոչ Երկեայց 'ի չարէ , զի դու տէր ը  
իս ես :

Ցուպ քո և դաւաղան , նոքա միսիթարես.  
ցեն զիս :

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան ,  
ակն յանդիման նեղաց իմոց :

Օծեր իւղով զզլուխ իմ , բաժակ քո ող  
անապակ արբեցոյց զիս :

Ողորմութի քո տէր զհետ իմ Եկեսցէ զա.  
մենայն աւուրս կենաց իմոց , բնակիւլինձ 'ի  
տան տն ընդ Երկայն աւուրս :

Փառք Հօր և Որդւոյ են :

Քհ : Տ՛ մի ըստ մեղաց մերոց առներ մեզ :

Պիս : Եւ մի ըստ անօրէնութեց մերոց հատուցաներ մեզ :

Քհ : Աչք ամենեցուն 'ի քեզ յուսան տր :

Պիս : Եւ դու տաս կերակուր նոցա 'ի ժամու :

Քհ : Յիշեալ զժողովուրդս քո :

Պիս : Զոր ստացար 'ի սկզբանէ :

Քհ : Տ՛ տացէ զքաղցրութի :

Պիս : Եւ երկիր մեր տացէ զպտուղ իւր :

Քհ : Տ՛ լուր աղօթից իմոց :

Պիս : Եւ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ :

Քհ : Տ՛ լնդ ձեզ :

Պիս : Եւ լնդ հոգւոյդ քում :

### Ազօնեսցուք :

Քհ : **Օ** անձառելի ողորմութիդ քո տը դըթութեղ քովցոյց մեզ . զի զմեզ զամենեսին սրբեսցես յամենայն մեղաց մերոց . և վասն մեղաց՝ յարժանահաս պատժոցն աղատեսցես :

Տուր մեզ, աղաւեմք տէր զարդիւնս բարեպաշտ աղաչանաց մերոց, և զսովն յետս դարձո մարդասէր տէր . զի սիրտք մահկանացուացն ծանիցեն, թէ ցասումն բարկութե քո զայսպիախ հարուածս առաքէ . և գըթութի քո դադարեցուցանէ :

Դարձո առ քեզ քաւիչ տը զլսոնարհեալ ժողովուրդ քո . որ վասն մեղաց 'ի սովէն տառապի . զի ասացեր անսուտ խոստմամբ քով, թէ որ իննդրէ զարքայութին երկնից՝ այն ամ յաւելցի նմա . որ կեաս և թաղաւ

ւորես ընդ Հօր և ընդ Հոգւոյն նը, ընդ ամ  
յաւիտեանս յաւիտենից :

Պիւ: Ամէն :

(Ապա տայ Օրհ : Եղիցի անուն նն :)

---

25. Մաղթանք առ ԱՃ :

'Ի լինել ժանտամահու, և այլ մահաբեր  
արկածից :

( Ասի Լիթանեայն Աճ նըց ( Աւ 10 : )  
այնպէս ող ասացաւ 'ի վերոյ ( երես . 197 : )  
Ապա Քհ. երիցս ասէ ( ձայնիւ : ) Զի 'ի հա-  
րուածոց ժանտամահուն ազատել զմեղ հա-  
ճեսցիս : Ան : )

Քհ : Հայր մեր : ( 'ի թիւ : )

Քհ : Եւ մի տանիր զմեղ 'ի փորձութիւն :  
( ձայնիւ : )

Պիւ: Այլ փրկեա զմեղ 'ի չարէ :

Սղմ. զ : ( ձայնիւ : ) Տի մի սրտմտութ քով  
յանդիմաներ զիս . և մի բարկութ քով խրա-  
տեր զիս :

Ողորմեա ինձ տէր, զի հիւանդ եմ ես .  
բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ :

Անձն իմյոյժ խռովեցաւ, և դու տր մինչև  
յերբ :

Դարձ տր և փրկեա զանձն իմ, կեցն զիս  
տր ըստ ողորմութեն քում :

Զի ոչ ոք է որ 'ի մահու յիշէ զքեղ, կամ  
'ի դժոխս խռոտովան առնիցի առ քեղ :

Վաստակեցայ ես 'ի հեծութեան իմում,  
ըուացի զամ դիշեր զմահիճն իմ, և արտա-  
սուօք իմովք զանկողինս իմ թացի :

Խոռովացաւ 'ի սրտմտութե՛ ակն իմ, և մաշեցայ ես 'ի վերայ ամթշնամեաց իմոց:

'Ի բաց կացէք յինէն ամբն, ոյք գործէք զանօրէնութի:

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ արաղօթից իմոց, և տէր զննդրուածս իմ ընկալաւ :

Ամաչեսցեն և խոռովացին յոյժ ամթշնամիք իմ, դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խոռովացին :

Փառք Հօր և Որդւոյ ևն :

Քհ: Տէր մի ըստ մեղաց մերոց առներ մեղ:

Պի: Եւ մի ըստ անօրէնութե՛ մերում հատուցաներ մեղ:

Քհ: Օգնեա մեղ ած փրկիչ մեր:

Պի: Եւ վասն փառաց անուան քո տր փըրկեա զմեղ:

Քհ: Տէր մի յիշեր զմեղս մեր զառաջինս :

Պի: Վաղվաղեսցէ առ մեղ ողօրմութիւն քո տր, զի աղքատացաք յոյժ:

Քհ: Բարեխօսեցէք վշ մեր Սբ Սեբաստիանոս և Սբ Յակոբ Հայրապետ :

Պի: Զի արժանի եղիցուքխօստմանցն Քնի:

Քհ: Տը լուր աղօթից իմոց :

Պի: Եւ աղաղակ իմ առ քեղ եկեսցէ :

Քհ: Տը ընդ ձեղ :

Պի: Եւ ընդ հոգւոյդ քում :

### Աղօթեսցուք :

Քհ. 1 ուր մեղ ած փրկիչ մեր. և բարեխօսութեամբ երանուհւոյն և փառաւորեալ միշտ կուսին Մարիամու Ածածնին, և Երանելոյն Սեբաստիանոսի վկային քո և

ԱՅՆ Յակոբայ Մծբնայ Հայրապետին . և  
ամ ԱԵց , զժողովուրդ քո 'ի զարհուրանաց  
բարկութե՛ քո ազատեա . և կացո յանդոր-  
րու առատաբաշխ ողորմութե՛ քով :

Արբեա առ զպաղատանս մեր , և զհոդւոց  
և զմարմնոց զախտաժէտուիս մեր բժշկեա ,  
զի ընդունելութե՛ թողութե՛ մեղաց մերոց ,  
'ի քոյին օրհնութիդ ցնծասցուք : Տուր ա-  
զաշեմք առ զարդիւնս բարեպաշտ հայցուա-  
ծոց մերոց . և զժանտամահն , և զայլ մահ  
պատուհասի հեռացո 'ի մէնջ սրբելով զմեղ .  
զի սիրտք մահկանացուաց ծանիցեն՝ թէ  
ցասումն բարկուե՛ քո զայսպիսի հարուածս  
առաքէ , և զթութի քո զադարեցուցանէ .  
Տերամք մերով Յնիւ Քնիւ , ը որում քեզ  
Հօր և Հոգւոյդ նըյ , վայելէ փառք , իշխա-  
նութի և պատիւ , այժմ և միշտ և յաւի-  
տեանս յաւիտենից :

Պիս : Ամէն :

( Ապա տայ Օրհ . Եղիցի անուն ան : )

## 26. Մաղթանք առ ԱՖ :

'ի ժամանակս պատերազմաց ընդդէմ  
Քրիստոնեայ թագաւորաց :

( Ա թիվ Լիթանիայն ԱՖԱԵՑ . ( Ա- 10 .)  
և անմիջապէս , )

Քհ : Հայր մեր : ( 'ի թիւ : )

Քհ : Եւ մի տանիր զմեղ 'ի փորձութիւն .  
( ձայնիւ : )

Պիս : Այլ փրկեա զմեղ 'ի չարէ :

Աղմ. ԻԷ . ( ձայնիւ : ) ԱՃ մեր ապաւէն և

( 207 )

ղօրութիւն օդնական ՚ի վերայ նեղութեց ,  
որք դտին զմեղ յոյժ :

Վե այսորիկ ոչ երկիցուք մեք ՚ի խռովիլ  
երկրի , ՚ի փոփոխիլ լերանց ՚ի սիրոս ծու-  
վու :

Գրոշեցին և խռովեցան ջուրք նոցա , խռո-  
վեցան լերինք ՚ի զօրութէ նորա :

Գնացք գետոց ուրախ առնեն ղքաղաքն  
այ , և ոք արար զյարկս իւր բարձրեալն :

Ած ՚ի մէջ նոցա , և նոքա մի սասանես-  
ցին . օդնեսցէ նոցա ած ՚ի վաղորդենէ մին-  
չև ՚ի վաղորդայն :

Խռովեցան հեթանոսք , և խռնարհեցան  
թագաւորուիք , ետ զձայն իւր բարձրեալն ,  
և խռովեցաւ երկիր :

Տի՛ զօրութեց ընդ մեղ , ընդունօղ է մեր  
ած յակոբայ :

Եկայք և տեսէք զգործս այ , որ արար  
զնշանս և զարուեստս ՚ի վը երկրի :

Եհար զպատերազմ ՚ի ծագաց մինչև ՚ի  
ծագս երկրի , զաղեղունս փշրեաց , զղէնս  
խորտակեաց , և զասպարս այրեաց հրով :

Կանխեցէք և ծաներուք , զի ես եմ ած ,  
բարձր եղէց ՚ի հեթանոսս , և բարձրացայց  
՚ի վերայ երկրի :

Տի՛ զօրութեց ը մեղ , ընդունօղ է մեր ած  
յակոբայ :

Փառք Հօր և Որդւոյ իւա :

Քհ : Արի տէր օդնեա մեղ :

Պիս : Եւ փրկեա զմեղ վասն անուան քո :

Քհ : Կեցն տը զժողովուրդ քո :

Պիս : Ած իմ որ ՚ի քեղ յուսացաւ :

Քհ : Եղեցի խաղաղութիւն ՚ի զօրութեան  
քում :

Պիս : Եւ շինութիւն յաշտարակս և յա-  
մուրս քո :

Քհ : Լեր մեղ տր աշտարակ հզօր :

Պիս : Յերեսաց թշնամւոյն :

Քհ : Զաղեղունս վշրեա , և զգէնս խոր-  
տակեա :

Պիս : Եւ զասպարս այրեա հրով :

Քհ : Առաքեա մեղ եր դօդնութի ՚ի սրբութ :

Պիս : Եւ ՚ի սիօնէ պաշտպանեա զմեղ :

Քհ : Տը լուր աղօթից իմոց :

Պիս : Աղաղակ իմ առ քեղ եկեսցէ :

Քհ : Տէր ընդ ձեղ :

Պիս : Եւ ընդ հոգւոյդ քում :

### Աշօթեայուս :

Քհ : **Ա**ծ որ խորտակես զպատերազմունս ,  
և զընդդիմամարտս յուսացելոցն ՚ի քեղ  
կարողութը պաշտպանութե քո վանես . լեր  
օդնական ծառայից քոց խնդրողաց զողոր-  
մութիդ քո . զի զթշնամեաց մերոց զբոնու-  
թին խորտակեալ , զքեղ անդադար գոհու-  
թը բարեբանեսցուք :

**Ա**ծ , յորմէ բղիսին ՚ի մեղ նը փափաք-  
մունք , ուղիղ խորհուրդք և արդար գործք .  
տուր ծառայից քոց զխաղաղութին զայն  
զոր աշխարհս ոչ կարէ տալ , զի և սիրտք մեր  
հնաղանդեսցին պատուիրանաց քոց , և եր-  
կիւղ թշնամեաց բարձցի ՚ի մէնջ . և ժամա-  
նակ կենաց մերոց ընդ հովանեաւ քով մնաս-  
ցէ ՚ի խաղաղութեան :

Զհպարտութի թշնամեաց մերոց՝ աղա-  
շեմք տր , զգեսնեա , և զըմբոստութի նոցա-  
զօրութը աջոյ քո տապալեա . տերամք մե-

ըով Յնիւ Քնիւ Որդւովքով , որ ընդ քեզ  
կեայ և թաղաւորէ՝ ի միութե Հոգւոյն նըյ  
ած , ընդ ամ յաւիտեանս յաւիտենից :  
Պիւ : Ամէն :

---

## 27. Մաղթանք առ Ած :

Ի ժամանակի Պատերազմաց ընդդէմ Ան-  
հաւատից և Հերետիկոսաց :

( Ասի Լիթանիայն Ամ սբց . ( Աւ 10 ) :  
յորում երկիցս ասի . Զի զթշնամիս եկեղեց-  
ւոյ սբյ ևն . և զկնի պատարագին ,  
Քհ : Զի զբոնութիս Անհաւատից ( և կմ )  
Հերետիկոսաց , յաղթահարել և յոչինչ դար-  
ձուցանել համեսցիս . ևա . և ապա ասին  
մացորդքն . և զկնի , )

Քհ : Հայր մեր : ( 'ի թիւ : )

Քհ : Եւ մի տանիր զմեղ 'ի փորձութիւն :  
( ձայնիւ : )

Պիւ : Այլ փրկեա՛ զմեղ 'ի չարէ :

Աղմ . հը : ( ձայնիւ : ) Ած մտին հեթա-  
նոսք 'ի ժառանգութի քո , և պղծեցին զտա-  
ճար նըք քո :

Արարին զերուսաղէմորպէս զհիւզս մըր-  
դապահաց , արկին զդիւակունս ծառայից քոց  
դէշ թոշոց երկնից , և զմարմինս նըց քոց  
դազանաց երկրի :

Հեղին զարիւն նոցա որպէս զջուր շուրջ  
զերուսաղէմաւ , և ոչ ոք էր որ թաղէր :

Եղեաք մեք նախատինք զրացեաց մերոց ,

ծաղը և այպն կատականաց այնոցիկ, ոյք  
շուրջ էին զմեօք :

Մինչև յերբ տէր բարկանաս դու խպառ,  
բորբոքեացի որպէս հուր նախանձ քո :

Հեղ զբարկութի քո 'ի վերայ աղդաց,  
որք զքեղոչ ճանաշիցեն. 'ի վերայ թագաւ,  
ւորաց, որք զանուն քո ոչ կարդացին, զի  
կերին զյակոր և զտեղի նորա աւերեցին :

Մի յիշեր զմեղս մեր զառաջինս, վաղվա-  
ղեացէ առ մեզ ողորմութի քո տր, զի աղքա-  
տացաք յոյժ :

Օդնեամ մեղ ած փրկիչ մեր, վասն փա-  
ռաց անուան քոյ :

Տի փրկեամ զմեղ և քաւեամ զմեղս մեր վո-  
անուան քոյ :

Մի երբէք ասասացեն 'ի հեթանոսս, թէ ուր  
է ած նոցա :

Այլ յայտնի ինչ լիցի 'ի վերայ հեթա-  
նոսաց առաջի աշաց մերոց, առ 'ի ինդիլ  
զվրէժ արեան ծառայից քոց որ հեղաւ :

Մացէ առաջի քո հեծութի կապելոց,  
ըստ մեծութեն բազկի քոյ շահեամ դու զոր-  
դիս սպանելոց :

Հատո՛ դրացեաց մերոց եօթնպատիկ 'ի  
ծոցս նոցա, նախատինս իւրեանց, զոր նա-  
խատեցին զքեղ տէր :

Մեք ժողովուրդք և խաշն արօտի քո-  
խոստովան եղիցուք առ քեղ յաւխտեան,  
յազգէ յազգ պատմեսացուք զօրհնութիս քո :  
Փառք Հօր և Որդւոյ ևա :

Քհ : Կեցն զծառայքս քո :

Պիս : Ած իմ որ 'ի քեղ յուսացան :

Քհ : Լեր մեղ տր աշտարակ հզօր :

Պիս : Յերեսաց թշնամւոյն :

ՔՀ: ՄԵՐ ԱՆԴԻ ԹՁՆԱՄԲԻՆ :  
 ՊԽ: ԵՎ ՈՐԴԻՆ ԱՆՈՐէՆՈւՆ ՄԻ ՀԱՐԾԱՐԵԱԾԷ  
 զմեղ :  
 ՔՀ: ԶՀԱՊԱՐՄՈՒԹԻ ԹՁՆԱՄԵԱՋ ԱՆՈւԱՆ  
 ՔՌ ՄԵՐ զգԵՄՆԵԱ :  
 ՊԽ: ԵՎ զամբարտաւանութիւն նոցա խոր-  
 տակեա :  
 ՔՀ: ԵՂԻԳԻՆ ՆՈՔԱ ՈՐԱԿԵԱ ՓՈՉԻ ԱռԱՋԻ  
 հողմոյ :  
 ՊԽ: ԵՎ հրեշտակ նոն հալածեսցէ վնոսա :  
 ՔՀ: ՀԵՂ զբարկութիւն քո 'ի վերայ աղ-  
 դաց , որք զբեղ ոչ ճանաչլցեն :  
 ՊԽ: ԵՎ 'ի վերայ թաղաւորաց , որք զանուն  
 քո ոչ կարդացին :  
 ՔՀ: Առաքեա մեղ նոր զօդնութիւն 'ի  
 սրբութէ :  
 ՊԽ: ԵՎ 'ի սիօնէ պաշտպանեա զմեղ :  
 ՔՀ: ՏԵՐ ԼՌԵՐ աղօթից խոց :  
 ՊԽ: ԵՎ աղաղակ խմ առ քեղ եկեսցէ :  
 ՔՀ: ՏԵՐ ԸՆԴ ձեղ :  
 ՊԽ: ԵՎ ԸՆԴ հոգւոյդ քում :

### Աղօնեայուս :

ՔՀ: **Ա**ղաչեմք ողորմած ած , տուր եկե-  
 ղեցւոյ քում , զի նր Հոգւովն ժողովեալ ,  
 արշաւմամբ թձնամեացն մի խռովեսցի :  
 Ած , որ խնդրես զվեկմս մեղաց , և կա-  
 միս զդարձ և զապաշխարութի մեղաւորաց .  
 Հայեաց քաւիչ տէր 'ի խնդրուածս ժողովը-  
 դեան քո՝ որք առ քեղ պաղառին . և յետս  
 դարձո զհարուածս բարկութե քո , որոց  
 արժանի եմք վասն մեղաց մերոց :

Ամենակարօղ մշտնջենաւոր ած , յորոյ  
ձեռին են իշխանութիւնք ամենեցունց , և  
իրաւունք ամենայն թագաւորութեանց .  
Հայեաց 'ի յօդնութիւն քրիստոնէից . զի  
աղքք Անհաւատից ( կամ Հերետիկոսաց , )  
որք 'ի գաղանութիւն իւրեանց վստահանան,  
կարողութեաց աջոյ քո խորտակեսցին . տե-  
րամբ մերով Յնիւ Քնիւ որդւովքով , որ ը-  
քեղ կեայ և թագաւորէ 'ի միութեաց Հոգ-  
ւոյն սբյ Ած , ընդ ամենայն յաւիտեանս  
յաւիտենից :

ՊԽ : Ամէն :

ՔՀ : Լուիցէ մեղ ամենակարօղ ողորմած  
մորն :

ՊԽ : Ամէն :

### 28. Աբաբուլութիւն ,

Յորժամ ընդ բոլոր օրն զնի սրբութիւնն  
'ի բեմն :

**Յ**առաւ-օտուն , զինի ժողովրդեան պա-  
տարագին զնէ ՔՀ : զըրբութիւն ճաճան-  
չիւ 'ի բեմն . խնկարկէ . և դառնայ նովաւ-  
առ ժողովուրդն . Արդ զայս խորհուրդ ածա-  
կան . մի տունն միայն . ապա տայ օրհնու-  
թիւն , խնկարկէ . և զնէ 'ի պատրաստեալ  
տեղին . և մնայ անդ մինչև ցերեկոյ : իսկ  
այլ պատարագք ասին յայլ բեմ , մի զինի  
միոյ : Յերեկոյն , յերկրորդ Զանդակին ,  
սկսանին զերեկոյեան ժամասացութիւնն  
զաւուր պատշաճն . իսկ 'ի հնչեցուցանել

ջուխդակին, սկսածնին զ Ալթանիայն Մարմ  
նոյ և Աբեան տն , և զկնի , զԱղօթք նորա .  
( Երես . 92 : ) Ապա դնէ զՃաճանչն 'ի բեմն ,  
խնկարկէ , դառնայ նովաւ առ ժողովուրդն ,  
Ծնողին և Հօր և այլն . տայ Օրհնու-  
թիւն , և դնէ 'ի բեմն . խնկարկէ . և ապա  
կանգնեալ , սկսանի 'ի ձայն բարձր Զքեզ  
ած գոհաբանեմք . և զկնի Աղօթք նորա .  
( Երես . 129 . ) ապա տայ օրհնութիւն , որ-  
պէս անդ գրեալ է . և զկնի ծածկէ զԱլբ-  
բութիւնն 'ի տեղւոջ իւրում :



## Ը Ա Բ Ա Կ Ե Վ

Ա Ս Ա Ց Ե Ա Լ Ք Դ Մ Խ Ի Թ Ա Ր Ա Յ  
Ա Բ Բ Ա Յ Ե Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ե Ս Ե Ս Ե  
Բ Ա Ս Ա Ց Ի Ո Յ :

---

29. Կ ա ն ո ն Հ ր ա շ տ ա ս Ա ն ո ւ ա ն ն Յ ո ւ :

Օ ը հ . Գ և . **Փ**առացըդ հօր ճառագայթ որ  
վասն մեր մարմնացաւ . առ ՚ի փրկելց զգե-  
րեալսն ՚ի գերունց բանսարկուին . փրկեա-  
և զմեղ տը փառաց անուամբ փրկչին յի-  
սուսի :

Այսօր հանդիսաձայնի ձայն աւետման  
հրեշտակին , թէ այսօր ձեղ ծնաւ փրկին  
որ է օծեալ միածին . փրկեա և զմեղ տէր  
փառաց որդի նը անուամբ քոյին :

Արդ ցընծացեալ բերկրեսցուք առ քեղ  
հոգի նը անմահ . զի այսօր էակից քո բան  
կոչի յիսուս և փրկիչ . փրկեա և զմեղ տէր  
փառաց անուամբ փրկչին յիսուսի :

Ո՛վ նը արմատ փրկութե խեկուհի կոյս  
մարիամ . ՚ի քեղ ևս այսօր եղե բան , որ  
է վեր քան զամենայն . կոչիւ քեղ ծնող  
փրկութե անուամբ յիսուսաղըութե :

Որ 'ի նախնումն ընտրեցեր դյեսու վըր-  
կիչ յակոբայ . իսկ այսօր զորդիդ միածին  
շնորհես փրկիչ աշխարհի . օրհնեմք դայըլդ  
դժած անուամբ որդւոյ քո յաւէտ :

Երկըրպագելի անուն յիսուսյա տր վըր-  
կիչ . որոյդ իսկ յաւէտ կրկնի ծունը յայնց  
որք յերկինս և յերկրի . կրկնեմք և մեք  
ծունը հոգւով անուան քոյ և քեզ յաւէտ :

Արդ աղաւեմք զնք դշոգիդ , որ դժուեց  
ես աղբիւր . զի 'ի սիրտ մեր և 'ի հոգի դի-  
ցես զանուն յնի . որով մեք յաւէտ կարի-  
ցեմք ասել տր դյա փրկիչ :

Ուրախ լեռ նը մարիամ մայր և ծնող  
յնի . զի թէպէտ այսօր ճըմեցաւ սիրտ քո  
դժած և բարի . սակայն յոյժ հըճուեալ  
ցնծացար կոչմամբ որդւոյն քո յա :

Հյ . դէ . Անբաւելին ամ էից և հօր ծո-  
ցածին . այսօր շնորհեցաւ մեզ ընդունիլ  
զնա փրկիչ . օրհնեալ տր ած հարցըն մե-  
ռոց :

Այսօր նը դասքն երկնայնոց ընդ մեզ  
լինդակցին . զի կոչեցաւ փրկիչ մեզ նա՝ որ  
է հօր միածին . օրհն :

Որ աղատիչ դերելոց , փրկիչ նեղելոց .  
այսօր իսկ ծանուցաւ մեզ կոչմամբն յա  
փրկիչ . օրհն :

Դ . Զյա օրհնեցէք , բարձր արարէք զնա  
յաւիտեան :

Որ զյանցանս երկանց մերոց հեղութքն  
երարձ . և զմեզ իսկ զերծոյց անուամբ իւ-  
րով յա . ցընծութք դովելով բարձր արա :

Անուն իւր նը է անուն մեծի խորհրդոյ ,

Հրեշտակ այ . և ած իսկ հզօր հայր հանդեր ձելոյ . ժողովուրդք հրձուելով , բարձր արա " :

Որ այսօր անուանի յն 'ի փրկել զմեղ . փրկէ յաւէտ զանուանասէրս յամենից մեղաց . քահանայք հոգեռը երդով , բարձր արա " :

### Մեծա " : ԴՅ . Ծագումն հրաշալի :

